

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-16/9**

ք. Երևան

19.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խաչատուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան՝ և կատարման ժամկետ է սահմանվում Պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վեցերորդ ամսվա վերջին օրը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի Աշխատանքների փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից Պայմանագրի 1.2 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, Պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.2 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին Պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը՝ բացառությամբ Պայմանագրի 5.1.1 կետի գումարի:

3.3.2 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորումների (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկումներ, մասնակցել սարքավորումների համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական Աշխատանքների կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքների թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են Պայմանագրի N 4.2 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները:

Կապալառուի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի Աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ Աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է Պայմանագրի գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ Աշխատանքները:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն Պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված Աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված Աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը Պայմանագրի պահանջներին և, եթե կատարված Աշխատանքը՝

ա. համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև վերը նշված կարգով նախատեսված Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված Աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված Աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման

հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 412000000 (չորս հարյուր տասներկու միլիոն) ՀՀ դրամ, որից՝ 68666667 (վաթսուութ միլիոն վեց հարյուր վաթսուվեց հազար վեց հարյուր վաթսույոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 2017թ. վճարման ենթակա գումարը կազմում է 153072888 (մեկ հարյուր հիսուներեք միլիոն յոթանասուներկու հազար ութ հարյուր ութսուութ) ՀՀ դրամ, որից՝ 25512148 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր տասներկու հազար հարյուր քառասուութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.2 Պայմանագրի ընդհանուր գնից մինչև 153072888 (մեկ հարյուր հիսուներեք միլիոն յոթանասուներկու հազար ութ հարյուր ութսուութ) ՀՀ դրամի չափով Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիք ներկայացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.3 Պայմանագրի ընդհանուր գնի և 2017թ. հատկացված ֆինանսական միջոցների տարբերության չափով Աշխատանքները կկատարվեն դրանց համար ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքների կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի Աշխատանքների, փուլերի և ծավալների՝ Պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում յուրաքանչյուր կատարողական ակտի դիմաց վճարումն իրականացվում է հետևյալ բանաձևով՝

ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված Պայմանագրի ընդհանուր գինն է (412000000 ՀՀ դրամ),

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է (497262873 ՀՀ դրամ),

Ծ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքի ընդհանուր գումարնի չափն է,

ՎԳՏ – տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարնի չափն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և Պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 5.1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում դատարանի կողմից՝ Կողմերի հաշտության համաձայնագիր հաստատելու մասին դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելու պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնսան գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն

ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառու:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 4.2 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
«Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012755, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար



Ա. Սկրտչյան

ՎԱՊԱԼԱՌՈՒ

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ
Ք. Էջմիածին, Կոյրիշև 4ա,
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400
ՀՎՀՀ 04715751

Տնօրեն՝



Ա. Խաչատուրյան
ստորագրություն

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 91 ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Հ/Հ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՄԻՄՆԵՐ | | | | | | | | | | | |
|-----|--------------------------|----------------------|-----|-----|-----|------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| | | 1-2 | 3-4 | 5-6 | 7-8 | 9-10 | 11-12 | 13-14 | 15-16 | 17-18 | 19-20 | 21-22 | 23-24 |
| 1 | Հողային աշխատանքներ | █ | | | | | | | | | | | |
| 2 | Ապամոնտաժման աշխատանքներ | █ | █ | | | | | | | | | | |
| 3 | Ե/Բ կոնստր. Իրականացում | | █ | █ | | | | | | | | | |
| 4 | Քարային աշխատանքներ | | | █ | █ | █ | | | | | | | |
| 5 | Տանիքի աշխատանքներ | | | | | | █ | █ | | | | | |
| 6 | Հարդարման աշխատանքներ | | | | | | | | █ | █ | | | |
| 7 | Ինժ. ցանցերի իրականացում | | | | | | | | | █ | █ | | |
| 8 | Բարեկարգում | | | | | | | | | | █ | █ | █ |

ՊԱՏՎԻՐԱՑՈՒ

«Վառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Հ 900011012755, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար



Ա. Մկրտչյան

(ստորագրություն)

ՎԱՊԱԼԱՌՈՒ

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ
 Ք. Էջմիածին, Կոյրիշև 4ա,
 «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,
 Հ/Հ 16017962400400
 ՀՎՀՀ 04715751

Տնօրեն՝



Ա. Խաչատուրյան

(ստորագրություն)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

| | | Աշխատանքի | | | | | | | | | | | | | |
|--------------------------------------|---|-------------------------------------|---|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|-----------|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45611100/1 | Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցում | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 153072888 | 153072888 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՑՈՒ

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012755, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար



Ա. Մկրտչյան


(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՊԱԼԱՌՈՒ

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ
Ք. Էջմիածին, Կոյրիշև 4ա,
«ՀՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400
ՀՎՀՀ 04715751

Տնօրեն՝



Վ. Խաչատուրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Կատարված աշխատանքի | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|-----------|---|--|---------|--|---------|-------------------------------------|--|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
 (այսուհետ՝ Կապալառու) մինչև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
 գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
 Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|-----------|----------------|---------------------|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն

ԱՆ ԱՆՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ

Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքներում օգտագործվող բոլոր նյութերը և սարքերը պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմերին ու ստանդարտներին և ապահովեն աշխատանքային բարձր որակ:

| ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏ (տարի) |
|--|---------------------------|
| Տանիքի ծածկույթ և մետաղական կոնստրուկցիաներ | 10 |
| Կախովի առաստաղ հիմնակմախքով | 5 |
| Դռներ պատուհաններ | 5 |
| Հատակների և պատերի երեսպատում կերամիկական սալիկներով | 5 |
| Արտաքին հարդարման նյութեր | 3 |
| Խողովակներ, կցամասեր և փականներ | 3 |
| Ջեռուցման սարքավորումներ | 5 |
| Հրդեհային ազդանշանային ընդունիչ-հսկիչ սարքեր | 5 |

Պահպանելով արտադրողի կողմից սահմանված նյութերի շահագործման պայմաններն երաշխիքային ժամկետում կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլ) և օգտագործված նյութերի շարքից դուրս գալու դեպքում, շինարարական կազմակերպությունը պարտավոր է վերացնել այդ թերություններն իր միջոցներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
 ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Հ 900011012755, ՀՎՀՀ 02565827

ԿԱՊԱԼԱՌՈՒ
 «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ
 Ք. Էջմիածին, Կոյբիշև 4ա,
 «ՀՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,
 Հ/Հ 16017962400400
 ՀՎՀՀ 04715751

Աշխատակազմի ղեկավար՝



Ա. Ակրոսյան
 (ստորագրություն)

Տնօրեն



Ա. Խաչատուրյան
 (ստորագրություն)

ՕԱՎԱԼԱԹԵՐԹ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևանի թիվ 191 դպրոցի շենքի վերակառուցման
աշխատանքներ

Հազ. ՀՀ դրամ

| Հ/Հ | | Համաշինարարական աշխատանքներ | Չափ. միավ. | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---------|--|------------|--------|----------------|-----------|
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է |
| I. Ե/բ դիաֆրագմաների պատրաստում | | | | | | |
| 1 | E46-99 | Բետոնե հատակների քանդում | խմ | 0.25 | 15.76 | 3.940 |
| 2 | E1-961 | III-րդ կարգի հողի և խճե հենքի քանդում | 100խմ | 0.434 | 183.36 | 79.577 |
| 3 | E1-1133 | III-րդ կարգի հողի հարթեցում ձեռքով | 100քմ | 0.25 | 16.67 | 4.167 |
| 4 | E11-11 | B10 բետոնով հարթեցնող շերտի պատրաստում | խմ | 4.2 | 32.65 | 137.129 |
| 5 | E6-22 | Ե/բ հիմնային հեծանի պատրաստում B20 | խմ | 15.5 | 50.94 | 789.597 |
| 6 | Ի.Տ. | Ամրան A-500c A12-20 | տն | 0.6 | 421.19 | 252.714 |
| 7 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 0.22 | 430.75 | 94.766 |
| 8 | P23-114 | Անցքերի շաղափում բաժակների հիմքերում Φ20 | 100հատ | 1.2 | 35.55 | 42.659 |
| 9 | Ի.Տ. | Խարսխման ամրան Φ16 | տն | 0.082 | 421.19 | 34.538 |
| 11 | P23-114 | Անցքերի շաղափում հիմքի բաժակներում, պարզունակներում և սյուներում հիմքերում Φ20 | 100հատ | 16 | 35.55 | 568.783 |
| 12 | E6-150 | Միաձույլ ե/բ դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստ. | խմ | 155 | 82.46 | 12780.581 |
| 13 | Ի.Տ. | Ամրան A-500c | տն | 19.345 | 421.19 | 8147.905 |
| 14 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 0.85 | 430.75 | 366.140 |
| 15 | E46-84 | Գոյություն ունեցող սյան վրա անցքերի բացում քանդումով | խմ | 0.45 | 21.06 | 9.478 |
| 16 | E6-79 | Եռակցվող ամրանային կցումներ | տն | 0.25 | 549.26 | 137.314 |
| 17 | E46-35 | Գաջե սվաղի քանդում բետոնե մակերեսից | 100քմ | 3.13 | 15.64 | 48.955 |
| 18 | C 310-5 | Հողի և շին.աղբի բարձում և հեռացում 7կմ | տն | 9.8 | 3.71 | 36.320 |
| II. Գոյություն ունեցող սյուների ուժեղացում | | | | | | |
| 19 | E46-37 | Գաջե սվաղի քանդում բետոնե մակերեսից | 100քմ | 1.25 | 21.64 | 27.052 |
| 20 | E46-84 | Գոյություն ունեցող սյան վրա անցքերի բացում քանդումով | խմ | 0.35 | 21.06 | 7.372 |
| 21 | P23-114 | Անցքերի շաղափում հիմքի բաժակներում, պարզունակներում և սյուներում հիմքերում Φ20 | 100հատ | 1 | 35.55 | 35.549 |
| 22 | Ի.Տ. | Ցեմ. շաղախ | խմ | 0.04 | 35.34 | 1.414 |
| 23 | E46-2 | Գոյություն ունեցող սյուների ընդլայնում և ուժեղացում B20 բետոնով | խմ | 23.3 | 84.37 | 1965.840 |
| 24 | Ի.Տ. | Ամրան A-500c | տն | 4.013 | 421.19 | 1690.232 |
| 25 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 1.623 | 430.75 | 699.112 |
| 26 | Ի.Տ. | Խարսխման ամրան Φ16 | տն | 0.23 | 421.19 | 96.874 |
| III. Ա մասնաշենք | | | | | | |
| Գոյություն ունեցող ծածկերի ուժեղացում 00,3.30 և 6.6 նիշերում | | | | | | |
| 28 | E46-82 | Գոյություն ունեցող ե/բ ծածկի սալերում անցքերի բացում քանդումով | 100հատ | 42.0 | 23.49 | 986.636 |
| 29 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 1.35 | 430.75 | 581.516 |
| 30 | E46-5 | B20 բետոնով ծածկի ուժեղացնող շերտի պատրաստում | խմ | 65.6 | 82.70 | 5424.854 |

| | | | | | | |
|---|-------------------|--|--------|--------|--------|-----------|
| 31 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 3.8 | 430.75 | 1636.861 |
| IV.Բ մասնաշենք Գոյություն ունեցող ծածկերի ուժեղացում 00,3.30 և 6.6 նիշերում | | | | | | |
| 32 | E46-82 | Գոյություն ունեցող է/բ ծածկի սալերում անցքերի բացում քանոնումով | 100հատ | 42.0 | 23.49 | 986.636 |
| 33 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 1.35 | 430.75 | 581.516 |
| 34 | E46-5 | B20 բետոնով ծածկի ուժեղացնող շերտի պատրաստում | խմ | 65.6 | 81.99 | 5378.356 |
| 35 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 3.8 | 430.75 | 1636.861 |
| VII.Դահլիճային մասնաշենքի տանիքի և մետաղական կոնստրուկցիաներով երդիկի պատրաստում | | | | | | |
| 36 | 23-77 12-288-1 | Խարամով ջերմամեկուսիչ շերտի պատրաստում, տեսակավորումով, տեղափոխումով և տողանումով առանց նյութի արժեքի | խմ | 160 | 6.75 | 1079.946 |
| 37 | E46-103 | թ.26 երկտավրից մետաղական կարկասի պատրաստում | տն | 0.421 | 671.46 | 282.684 |
| 38 | E46-82 | թ.22 շվեյթից մետաղական կարկասի պատրաստում | տն | 2.219 | 525.68 | 1166.486 |
| 39 | E46-70 | թ.16շվեյթից կարկասի պատրաստում | տն | 1.86 | 540.90 | 1006.070 |
| 40 | E9-32 | թ.63-70անկյունակներից կարկասի պատրաստում | տն | 1.58 | 610.54 | 964.655 |
| 41 | E9-94 | 200x200քառ.մմ խողովակներով կարկասի պատրաստում | տն | 1.276 | 508.38 | 648.695 |
| 42 | E9-94 | 60x60քառ.մմ խողովակներով կարկասի պատրաստում | տն | 0.78 | 522.57 | 407.601 |
| 43 | Ի.Տ. | 20մմ մետաղական շերտավոր թիթեղ | տն | 0.251 | 530.69 | 133.203 |
| 44 | Ի.Տ. | 8մմ մետաղական շերտավոր թիթեղ | տն | 0.208 | 530.69 | 110.383 |
| 45 | Ի.Տ. | 12մմ մետաղական շերտավոր թիթեղ | տն | 0.042 | 530.69 | 22.289 |
| 46 | Ի.Տ. | 10մմ մետաղական շերտավոր թիթեղ | տն | 0.03 | 530.69 | 15.921 |
| 47 | E9-94 | 100x60x4մմ խողովակներով տափաստի պատրաստում | տն | 2 | 508.38 | 1016.763 |
| 48 | E9-94 | 60x60x3մմ խողովակներով կանգնակների և թեքանների պատրաստում | տն | 3.016 | 522.57 | 1576.059 |
| 49 | E9-94 | 60x60x3մմ խողովակներով մարդակների պատրաստում | տն | 1.334 | 522.57 | 697.103 |
| 50 | E9-94 | 100x60x4մմ խողովակներով անկյունային ծփեղատքերի պատրաստում | տն | 1.09 | 508.38 | 554.136 |
| 51 | E9-32 | 63x63x4 անկյունակներից կարկասի պատրաստում | տն | 0.356 | 610.54 | 217.353 |
| 52 | E9-94 | 60x30x2.5մմ խողովակներով ծփեղատքերի պատրաստում | տն | 5.025 | 522.57 | 2625.893 |
| 53 | Ի.Տ. | Ամրան A-500c | տն | 1.0459 | 421.19 | 440.522 |
| 54 | P8-191 | Ջրաեռացման խողովակների պատրաստում ներկ. ցինկ. թիթեղից 0,5 մմ հաստ, ներառյալ ջրիոս ձագարները մինչև 12մ | կտ | 9 | 36.02 | 324.155 |
| 55 | Ի.Տ. | Երկտակ ապակեփաթեթ, վերին շերտը 8մմ հաստության թրծված ապակուց և ներքին շերտը տրիպլեքս 2x6մմ հաստության ապակիներից երդիկի պատրաստում այլումինե կմախքի վրա: | քմ | 200.5 | 142.52 | 28574.911 |
| 56 | E15-325 | Երթիկի պատերի գիպակարտոնե սալերով երեսապատում, մետաղական կարկասի վրա | 100քմ | 3.65 | 622.29 | 2271.365 |
| 57 | E26-16 | Ջերմամեկուսացում հանքաքամքակով | խմ | 29.6 | 15.10 | 447.091 |

| | | | | | | |
|-------------------------------------|-----------------|---|---------|---------|--------|-----------|
| 58 | E8-194 | Ներքին աշխատանքների համար տախտակամածի պատրաստում | քմ | 180 | 0.91 | 164.181 |
| 59 | E13-172 | Գիպակարտոնե սալերի պատում ծեփամածիկով | քմ | 10.8 | 0.44 | 4.737 |
| 60 | E15-613 | Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում | 100քմ | 9.1 | 64.21 | 584.266 |
| 61 | P23-114 | Անցքերի բացում պարապետի սալերում | 100հաստ | 1.52 | 35.55 | 54.036 |
| 62 | E8-140 | Պեմզաբետոնե բլոկներով պատի շար | խմ | 4.6 | 23.67 | 108.879 |
| 63 | E15-16-1 | Տուֆե 30 մմ հաստության սալերով երեսապատում մետաղական ցանցի վրա | քմ | 23.4 | 16.18 | 378.581 |
| 64 | 15-19 | Բազալտե 30մմ հաստության սալերով երեսապատում մետաղական ցանցի վրա | քմ | 10 | 20.23 | 202.262 |
| 65 | Ի.Տ. | Ամրան A-500c | տն | 0.196 | 421.19 | 82.553 |
| 66 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 0.074 | 430.75 | 31.876 |
| 67 | E15-523 | Պատի սվաղի վրա լավորակ լատեքսային ներկում ճակատային ներկով | 100քմ | 17.1 | 98.58 | 1685.734 |
| 68 | E15-298 | Ցեմ.ավազե սվաղ պատերին, մետաղական Br -3 ցանցի վրա | 100քմ | 17.1 | 314.63 | 5380.465 |
| 69 | P14-225 | Պատերի պատում ծեփամածիկով | 100քմ | 0.108 | 24.18 | 2.611 |
| 70 | E10-24 | Պլաստիկ նյութերով երեսապատում | քմ | 82 | 2.51 | 205.913 |
| 71 | E12-278 | Ջրհորդանների պատրաստում տախտակամածի վրա գործարանում ներկված գունավոր թիթեղից 0,5 մմ տախտակամածի վրա | գմ | 148 | 11.70 | 1731.289 |
| 72 | E10-199 | Պիպի տախտակ | քմ | 44 | 8.45 | 371.733 |
| 73 | E12-404 | Գործարանում ներկած ալիքավոր թիթեղից տանիքի պատրաստում կավարամածով 0.5 մմ հաստ. | քմ | 1750 | 6.07 | 10614.760 |
| 74 | 12.-4 | Բետոնե սյունակների պատրաստում B15 բետոնով | խմ | 0.65 | 46.69 | 30.348 |
| 75 | E10-71 | Տանիքի ձեղնապատուհանների պատրաստում շերտափեղկերով | հաստ | 5 | 50.26 | 251.288 |
| 76 | Ի.Տ. | Մետաղական ճաղավանդակների տեղադրում 1,2մ բարձ. | գմ | 97.1 | 4.52 | 438.626 |
| 77 | E15-614 | Մետաղական ճաղավանդակների յուղաներկում | քմ | 19.42 | 0.92 | 17.918 |
| 78 | C310-5 տ.մ.կ 29 | Շին.աղբի հավաքում, բարձում ավտոհինքնաթափերի վրա և արտահանում 7կմ | տն | 65 | 3.71 | 240.856 |
| VIII. Բեմահարդակի պատրաստում | | | | | | |
| 79 | E11-184 | Տախտակամածի պատրաստում 50մմ հաստ. տախտակով | 100քմ | 0.4 | 867.88 | 347.152 |
| 80 | E15-328 | Լամինատե սալերով երեսապատում | քմ | 10.8 | 4.97 | 53.687 |
| 81 | E11-125 | Մանրահատակից հատակների պատրաստում | քմ | 40 | 8.00 | 320.153 |
| 81 | E10-146 | Փայտե աստիճանների պատրաստում | քմ | 3 | 10.32 | 30.955 |
| X. Բացվածքներ | | | | | | |
| 83 | E46-122 | Փայտե պատուհանների քանդում պատուհանագոգերով | 100քմ | 3.609 | 177.47 | 640.497 |
| 84 | E46-124 | Փայտե դռների քանդում | 100քմ | 0.8 | 107.46 | 85.970 |
| 85 | Ի.Տ. | Բացվող մետալալաստե պատուհան | քմ | 368.40 | 26.27 | 9677.434 |
| 86 | Ի.Տ. | Զբացվող մետալալաստե պատուհան | քմ | 109.786 | 18.27 | 2005.257 |
| 87 | Ի.Տ. | Պլասմասե պատուհանագոգերի պատրաստում 40սմ լայնության | գմ | 298 | 2.12 | 631.960 |
| 88 | E15-78 | Բազալտե պատուհանագոգերի պատրաստում 15սմ լայն. | քմ | 3.75 | 22.72 | 85.212 |

| | | | | | | |
|----------------------|----------------------------|---|-------|---------|--------|----------|
| 89 | E12-280 | Արտաքին պատուհանագոգերի պատրաստում գործարանային ներված թիթեղից 05 մմ հաստության | քմ | 215 | 3.45 | 742.748 |
| 90 | E15-210 | Ցեմ.ավազե սվաղ արտաքին պատերին | քմ | 25 | 1.39 | 34.774 |
| 91 | E8-163 | Կ/կ քարից շար պատուհանագոգերին | խմ | 1.1 | 20.36 | 22.399 |
| 92 | E8-140 | Պեմզաբետոնե բլոկով շար 30սմ | խմ | 4.84 | 19.60 | 94.860 |
| 93 | E26-16 | Ջերմամեկուսիչ շերտի պատրաստում 5սմ | խմ | 1.15 | 32.11 | 36.922 |
| 94 | E15-246- | Լավորակ գաջե սվաղ պատերին | 100քմ | 0.23 | 144.98 | 33.346 |
| 95 | Ի.Տ. | ՄԴՖ-ից դրան տեղադրում փայտե շրջանակով և կարկասով, երեսպատ.0,8 սմ հաստ. ՄԴՖ-ով | քմ | 150.44 | 32.04 | 4819.812 |
| 96 | Ի.Տ. | Այլումինից դրան տեղադրում | քմ | 56.04 | 32.80 | 1838.224 |
| 97 | Ի.Տ. | Մետաղական ծածկույթով դրան տեղադրում | քմ | 1.89 | 38.42 | 72.619 |
| 98 | Ի.Տ. | Մետալոպլաստե դռների տեղադրում 3 խցիկով,լայն.պրոֆիլ 60սմ | քմ | 47 | 32.80 | 1541.694 |
| 99 | շուկա | Պլաստիկ միջնորմների տեղադրում | քմ | 154 | 17.10 | 2633.737 |
| XI.Միջնապատեր | | | | | | |
| 100 | E46-88 | Միջնապատերի քանդում 100սմ | քմ | 155 | 0.77 | 118.787 |
| 101 | E46-80 | Միջնապատերի քանդում 200սմ | խմ | 156 | 7.51 | 1172.116 |
| 102 | E8-169 կիրառելի | Պեմզաբետոնե բլոկով միջնապատերի շար 100սմ | քմ | 168 | 2.98 | 499.931 |
| 103 | E8-140 | Պեմզաբետոնե բլոկով միջնապատերի շար 200սմ | խմ | 162.594 | 19.60 | 3186.698 |
| 104 | E6-106 Գ=0,5 | Ե/բ միջուկների պատրաստում B15բետոնով միջնապատերի շարի մեջ | խմ | 22.5 | 44.07 | 991.510 |
| 105 | E8-140 | Պեմզաբլոկից 100սմ միջնապատերի պատրաստում | խմ | 133.53 | 27.75 | 3705.612 |
| 106 | E6-170 | Ե/Բ բարավորների կառուցում | խմ | 3.1 | 64.99 | 201.464 |
| 107 | Ի.Տ. | Ամրան A500C | տն | 0.24 | 421.19 | 101.085 |
| 108 | Ի.Տ. | Ամրան A1 | տն | 0.9 | 430.75 | 387.678 |
| 109 | E8-169 կիրառելի | Արտաքին պատերի տաքացում փրփրապլաստով 5սմ և միջնապատի սալերով 100 սմ: | քմ | 1100.0 | 3.81 | 4188.897 |
| 110 | E8-59 | Շարի ամրանավորում A500C | տն | 0.875 | 476.71 | 417.121 |
| 111 | E8-59 | Շարի ամրանավորում A1 | տն | 0.37 | 481.60 | 178.191 |
| 112 | P23-223 | Շին.աղբի հավաքում, բարձում ձեռքով | տն | 58 | 0.25 | 14.502 |
| 113 | C310-5 | Շին.աղբի հեռացում 7կմ | տն | 320 | 1.76 | 561.864 |
| XII.Հատակներ | | | | | | |
| 114 | E46-103 | Մանրահատակի քանդում | քմ | 2300 | 0.48 | 1101.381 |
| 115 | E46-109 | Խեցեսալե հատակների քանդում | քմ | 54 | 0.38 | 20.317 |
| 116 | 46-119 կիրառելի 46--120 | Խճանկարե հատակների քանդում | 100քմ | 0.18 | 39.03 | 7.025 |
| 117 | 46-119 | Հարթեցնող շերտի քանդում | 100քմ | 24 | 33.78 | 810.781 |
| 118 | E46-99 | Հատակների բետոնե նախաշերտի քանդում 100սմ | խմ | 240 | 15.76 | 3781.636 |
| 119 | E46-99 | Սանհանգույցների բետոնե տումբաների քանդում | խմ | 4.1 | 15.76 | 64.603 |
| 120 | P23-223 | Շին.աղբի հավաքում, բարձում ձեռքով | տն | 54.88 | 0.25 | 13.722 |

| | | | | | | |
|------------------------------------|--------------------|--|--------|--------|--------|-----------|
| 121 | E 11-57 E 11-58 | Հատակների հարթեցում թեթև բետոնով 60 մմ | 100քմ | 24.2 | 203.64 | 4928.124 |
| 122 | E11-135 | Կերամոգրանիտից հատակների պատրաստում կպցված սուխնձե շաղախով | 100քմ | 27.677 | 802.66 | 22215.299 |
| 123 | E11-55 | Ցեմ.ավազե հարթեցնող շերտի պատրաստում 20մմ | 100քմ | 29.065 | 91.85 | 2669.625 |
| 124 | E11-14 | Իզոգամից ջրամեկուսիչ շերտի պատրաստում | 100քմ | 1.38 | 154.90 | 213.762 |
| 125 | E11-134 | Կերամիկական հատակների պատրաստում սանհանգույցներում | քմ | 78.5 | 5.37 | 421.552 |
| 126 | շուկա | Վինիլային հատակների պատրաստում մարգադահիժում LG Rexcourt 4.5մմ | քմ | 307 | 12.18 | 3738.265 |
| 127 | P5-119 Ընդ | 10մմ հաստ նրբատախտակից հատակների պատրաստում | քմ | 401.3 | 8.61 | 3454.432 |
| 128 | E11-197 | Հաճարե մանրահատակից հատակների պատրաստում հղկումով | քմ | 401.3 | 5.29 | 2122.988 |
| 129 | E11-563 Ընդ | Մանրահատակից հատակների լաքապատում | քմ | 401.3 | 0.72 | 288.251 |
| 130 | E11-500 | Բազալտե սալերից արտաքին աստիճանների երեսապատում | քմ | 138 | 21.35 | 2946.981 |
| 131 | Ի.Տ. | Անկյունակների արժեք | զմ | 57.2 | 1.96 | 112.172 |
| 132 | P13-131 | Կերամոգրանիտե սալերից աստիճանների երեսապատում | քմ | 182.4 | 8.03 | 1464.057 |
| 133 | շուկա | Վինիլային հատակների պատրաստում դասասենյակներում LG տիպի | 100քմ | 22.76 | 847.95 | 19299.329 |
| XIII. Հարդարման աշխատանքներ | | | | | | |
| 134 | E46-35 | Գաջե սվաղի քանդում առաստաղից | 100քմ | 9.07 | 15.64 | 141.860 |
| 135 | E46-37 | Թեք մասերի գաջե սվաղի քանդում | 100քմ | 1.256 | 21.64 | 27.182 |
| 136 | C310-5 տ,մ,կ 29 | Շին.աղբի հավաքում, բարձում ավտոհինքնաթափերի վրա և արտահանում | տն | 33 | 3.71 | 122.301 |
| 137 | շուկա | Աստիճանների ձևավոր ճաղաշարի պատրաստում քառանկյուն խողովակից, փոշեներկումով, փայտե լաքապատ բռնածողով տեղադրումով: | զմ | 133 | 18.24 | 2426.231 |
| 140 | E15-250-1 | Լավորակ գաջե սվաղ միջնապատերին և ե/բ դիաֆրագմաներին | 100քմ | 61.81 | 201.77 | 12471.183 |
| 141 | E15-251- | Նույնը առաստաղին | 100քմ | 35.35 | 237.64 | 8400.597 |
| 142 | E15-277-1 | Շեփերի գաջե սվաղ | քմ | 89 | 10.58 | 941.669 |
| 143 | E15-262 | Ցեմ ավազե սվաղ արտաքին թեք մասերին պատերին մինչև 20 սմ լայնությամբ | 100 քմ | 2 | 148.73 | 297.464 |
| 144 | E15-661 | Լատեքսային ներկով ներկում ներքին առաստաղին | 100քմ | 58 | 142.48 | 8264.075 |
| 145 | E15-660 | Լատեքսային ներկով ներկում ներքին պատերին | 100քմ | 70.76 | 66.74 | 4722.816 |
| 146 | E15-568 | Պատերի լավորակ յուղաներկում | 100քմ | 13.56 | 91.59 | 1241.932 |
| 147 | E15-277- | Սյուների գաջե սվաղ | քմ | 9.21 | 3.16 | 29.087 |
| 148 | E15-262 | Ցեմ ավազե սվաղ պատերին | 100քմ | 2.0 | 161.96 | 323.915 |
| 149 | E15-84 | Հաղճասալով երեսապատում սանհանգույցի պատերին | 100քմ | 2 | 6.13 | 12.268 |
| 150 | E10-64 | Պլաստմասայե կախովի առաստաղի հավաքում | քմ | 253.7 | 1.77 | 448.345 |
| 151 | E10-64 կիրառելի | Անստրոնգ կախովի առաստաղի հավաքում | քմ | 509 | 5.91 | 3006.132 |
| 152 | E8-194 E8-195 | Ներքին խողովակային տախտակամածի պատրաստում մինչև 10մ | 100քմ | 2.84 | 120.43 | 342.032 |

XIV.Նոր ավելացվող մաս և սալվածք

| | | | | | | |
|--|------------|--|-------|-------|--------|----------|
| 153 | E27-169 | Սալվացքների ասֆալտբետոնե ծածկույթ 3 սմ հաստ | քմ | 428 | 2.50 | 1068.682 |
| 154 | E11-6 | Խճե հենքի պատրաստում սալվածքի տակ | խմ | 42.8 | 9.21 | 394.166 |
| 155 | E1-961 | III-րդ կարգի հողի քանդում ձեռքով | 100խմ | 0.051 | 183.36 | 9.351 |
| 156 | E11-11 | B10 Բետոնե շերտի պատրաստում 5սմ հաստությամբ | խմ | 1.2 | 32.94 | 39.527 |
| 157 | 1.-22 | Ե/բ հիմնային հեծանի պատրաստում B20 | խմ | 11.2 | 47.21 | 528.791 |
| 158 | Ի.Տ. | Ամրան A-500c | տն | 4.376 | 421.19 | 1843.124 |
| 159 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 1.485 | 430.75 | 639.668 |
| 160 | 12.-7 | Ե/բ սյան պատրաստում | խմ | 1.7 | 85.03 | 144.555 |
| 161 | Ի.Տ. | Ամրան A-500c | տն | 0.043 | 421.19 | 18.111 |
| 162 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 0.093 | 430.75 | 40.060 |
| 163 | 15.-2 | Ե/բ հեծանի պատրաստում B20 բետոնով | խմ | 1.5 | 71.45 | 107.179 |
| 164 | Ի.Տ. | Ամրան A-500c | տն | 0.086 | 421.19 | 36.222 |
| 165 | Ի.Տ. | Ամրան A-1c | տն | 0.126 | 430.75 | 54.275 |
| 166 | E11-11Ընդ. | B20 բետոնով աստիճանների պատրաստում | խմ | 8.7 | 38.84 | 337.950 |
| 167 | E11-11Ընդ. | B20 բետոնով թեքահարդակների պատրաստում | խմ | 8.5 | 38.84 | 330.181 |
| 168 | Ի.Տ. | Ամրան A-500c | տն | 0.058 | 421.19 | 24.429 |
| 169 | E9-94 | 100x100x6.մմ քառ խողովակներով կարկասի պատրաստում | տն | 0.752 | 462.41 | 347.734 |
| 170 | E9-94 | 100x100x7.մմ անկյունակներից կարկասի պատրաստում | տն | 0.752 | 462.41 | 347.734 |
| 171 | E9-94 | 60x40x4.մմ քառ խողովակներով կարկասի պատրաստում | տն | 0.26 | 462.41 | 120.227 |
| 172 | E9-94 | 80x80x6քառ.մմ խողովակներով կարկասի պատրաստում | տն | 0.211 | 522.57 | 110.261 |
| 173 | E9-32 | անկյունակներից կարկասի պատրաստում | տն | 0.038 | 610.54 | 23.201 |
| 174 | Ի.Տ. | Ամրան A-500c | տն | 0.006 | 421.19 | 2.527 |
| 175 | Ի.Տ. | Մետաղական թերթ 8մմ | տն | 0.017 | 530.69 | 9.022 |
| 176 | E15-613 | Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում | 100քմ | 0.185 | 65.01 | 12.027 |
| Տանիք <<Ա, Բ և Գ>> մասնաշենքերի և նոր ավելացվող մասի | | | | | 0.00 | 0.000 |
| 177 | 12-278 | Ջրհորդանների պատրաստում տախտակամածի վրա գործարանում ներկված գունավոր թիթեղից 0,5 մմ տախտակամածի վրա | գմ | 267 | 11.70 | 3123.339 |
| 178 | E12-404 | Գործարանում ներկված ալիքավոր թիթեղից տանիքի պատրաստում կավարամածով 0,5 մմ հաստության | քմ | 1362 | 5.71 | 7779.923 |
| 179 | P8-191 | Ջրահեռացման խողովակների պատրաստում գործարանում ներկված թիթեղից 0,5 մմ հաստ,ներառյալ ջրիոս ձագարները մինչև 12մ /18 x 10մ/ | կտ | 18 | 36.02 | 648.310 |
| 180 | P8-191 | Ջրահեռացման խողովակների պատրաստում գործարանում ներկված թիթեղից 0,5 մմ հաստ,ներառյալ ջրիոս ձագարները մինչև 12մ /2 x 2,5մ/ | կտ | 2 | 20.00 | 40.000 |
| Ջրամատակարարում և կոյուղի | | | | | | |

| I. Քանդման աշխատանքներ | | | | | | |
|------------------------|---------|---|--------|------|-------|---------|
| 1 | P19-69 | Կերամիկական լվացարանների ապամոնտաժում | 100հատ | 0.28 | 41.62 | 11.652 |
| 2 | P19-70 | Զուգարանակոնքերի ապամոնտաժում | 100հատ | 0.32 | 51.30 | 16.415 |
| 3 | P19-1-B | Մինչև Φ32 խողովակների ապամոնտաժում | 100զմ | 3.54 | 28.32 | 100.264 |
| 5 | P19-54 | Կոյուղու մինչև Φ100 խողովակների ապամոնտաժում | 100զմ | 2.44 | 72.73 | 177.462 |
| 6 | C310-5 | Շին.աղբի հավաքում, բարձում ավտոհինքաթափերի վրա և արտահանում | տն | 14 | 3.55 | 49.642 |
| Ջրամատակարարում | | | | | | |
